լրովին թօթափեն և Հռովմայ թմբեցուցիչ ազդեցութենէն ազատելով իրենց նախնեաց փրկարար աւանդութիւնները պահպանեն։ Այս ընթացքիս մէջ, թէպէտ և ազգին մեծագոյն մասին հետ կրօնքով չմիանան, բայց անոնց եղբայրական համակրութիւնը հաւատեալ կը վայելեն. և ազգին երկու ճիւղերը, իրրև մի և նոյն արմատի շառաւիղներ՝ իրարու ձիրկընդխառն փաթթուելով, կը զարգանան և կը յառաջադիմեն փոխադարձ սիրով ու կրօնական ներողութեամբ, Ի պարծանս Հայ ազգին և Հայ անուան։

Մասիս թիւ 943

Նախընթաց թուով յարգի Կաթոլիկ ազգայնոյ մը մեզ տուած տեղեկութենէն առնելով հրատարակեր էինք թէ ազգային իրաւունքներն Հռովմայ ամոռին յանձնելու վերաբերեալ գիրը մի միայն Գեր. Հիւրմիւզեան եղբարք չեն ուզած ստորագրել։ Ետքէն ստացած տեղեկութիւններ կը հաւաստեն թէ Գեր. Սուքիաս Գաղանճեան եպիսկոպոսն և ուրիշ մէկ երկուք ալ Ի սկզբան չեն յանձներ առեր ստորագրել. բայց վերջն ինչպէս եղեր է գեռ լուր մը չկայ։ Քաղքէացւոց Պատրիարքին ալ նուն եկածը քաջալերական յոյս մը չտար գործին վախճանին վրայ։

Նոյն

Կը լսենք թէ երկուշաբթի օրն Համազգեաց ընկերութեան ժողովատեղւոյն մէջ ներկայ գտնուող բազմութեան ըրած կամաւոր նուէրին գումարը մինչև 10,000 դրշ. եղեր է։

Նոյն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

(Շարունակութիւն տե՛ս թիւ ԺԱ։)

Մենք կարող ենք էլի շատ օրինակներ բերել ապացուցանելու համար, թէ բոլոր արտաքին զգայարանաց գործունէութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հասարակ սովորութիւններ և ունակութիւններ։ Զորօրինակ՝ հոտառութիւնը. մարդուս հոտոտելիքը ի՛նչ է ընդունակ է ենթարկուել զանազան մարմիններու ներգործութեան, որոնք կարող են անընդհատ արտաշնչել և տարածել շատ նուրբ մասնիկներ, բաժանելով նոցա իւրեանց զանգուածից։ Երբ որ այս նուրբ նուրբ մասերը ներգործում են մեր հոտոտելիքի վերայ, մենք ստանում ենք մի ախորժ կամ անախորժ զգացմունք, որի թելադրութեամբ և իմանում ենք, որ սա մի պատճառ պէտք էր որ ունենար, բայց այս թելադրութիւնը չէ ցոյց տալիս բնաւ, թէ նիւթական մի պատճառ հարկաւ պէտք է լիներ։

Հապա ո՞ր տեղից է որ հոտառութեան զգայութիւնը ինքն իրան մէկ առանձին բան չենք կարծում, այլ այս զգայութիւնը միշտ մի որ և իցէ արտաքին մարմնուն ենք վերաբերում. սորա պատասխանը այն է, որ եթէ Ի ծնէ զուրկ լինէինք տեսութեան և շօշափման զգայարաններից, ապա այս վերաբերութիւնը չէինք կարող անել ամենևին։ Մեր սոցա օգնականութեամբ արած դիտողութիւնները, փորձառութիւնները և դատողութիւններն են, որ երեխայական հասակից արդէն սովորցրել են մեզ այս վերաբերութիւնը անել միշտ այսպիսի դիպուածներում։ Երբ որ վարդ տեսանք, մօտը գնացինք, շօշափեցինք, հոտառութիւն ասուած զգացմունքն էլ ստացանք միշտ։ Քանի անգամ որ շուշանին մօտեցանք, կամ պոկեցինք՝ մեր ձեռքը տուին, նորա անուշ հոտն էլ այնքան անգամ զգացինք և իմացանք։ Ահա այսպիսի փորձառութիւններով և դիտողութիւններով սովորում է երեխան, թէ հոտաւոր մարմիններուն մօտենալով, հոտառութեան զգացմունք է ստանում նա միշտ, որով և ունակութիւն է ստանում նա հոտառութեան զգացմունքը մի որ և իցէ մարմնոյն վերագրել, ինչպէս որ շօշափողական զգացմունքը նոյն իսկ շօշափելի առարկային։

Այս օրինակներից արդէն ինքն իրան երևում է թէ ինչպիսի կարևոր և բազմակողմանի հոգեկան և մտաւորական գործունէութեան մէջն է լինում երեխան դեռ ևս այն հասակում, յորում նա թվում է մեզ, հասակն առածներիս, դեռ ևս շատ հեռու մարդ անուն կրելուց։

Գիտութիւնը, քննելով և իմաստասիրելով երեխայի հոգեկան, մտաւորական և ֆիզիքական առաջին գործողութիւնները, ոչ թէ միայն բաւականացնում է մեր հետաքրքրութիւնը, այլ և մի և

նոյն ժամանակ գործնական շատ կարևոր օգուտներ է տալիս. որովհետև ծնողաց և դաստիարակաց համար շատ կարևոր է գիտենալ, թէ երեխան իւր կեանքի առաջին ամիսներում ոչ միայն ֆիզիքապէս է զարգանում, այլ և նորա ներսում հաստատւում են այն հիմունքները, որոնցից պէտք է բաղկանայ նորա հոգեկան բոլոր ապագայ գործունէութիւնը. այս միջոցումն են յառաջ գալիս և մշակվում այն ուժերը և գաղափարները, որոնց միջնորդութեամբ նա պէտք է ապագայում յարաբերի և կապակցվի հասարակութեան և մարդկութեան հետ. Այսպիսի հասկացողութիւն կազմելով մանչուկի մասին, ծնողները և դաստիարակները անշուշտ պարտական կը համարեն իւրեանց հոգալ նորա ոչ թէ միայն ֆիզիքական առողջութեան, այլ և հոգեկան և մտաւորական զարգացման մասին. Թէպէտ և այս ժամանակը այնպիսի անթափանցելի քօղով է ծածկած մեզ համար, որ ի հարկէ, կարող չենք երբէք դրականապէս գործել, բայց մենք կարող ենք բարերար ազդեցութիւն ունենալ երեխայի վերայ, այդ ժամանակ ևս հեռացնելով նորանից բոլոր այն, ինչ որ կարող էր այսպէս կամ այնպէս արգելել նորա ֆիզիքական հոգեկան և մտաւորական կանոնաւոր զարգացմանը. Այսպէս՝ օրինակի համար՝ մենք կարող ենք կարգ ու կանոն մտցնել նորա կեանքում, խնամք տանել նորա բոլոր կազմուածքի հանդարտութեանը և անդորրութեանը, հեռու պահել նորան բոլոր գրգռիչ ազդեցութիւններից և հեռացնել նորանից բոլոր զարշելի և տգեղ բաները, ինչպէս ֆիզիքականի նոյնպէս և բարոյականի վերաբերութեամբ. Ցայտնի է, զորօրինակ, այնպիսի մի համոզմունք, որ և շատերը նախապաշարմունք են կարծում, թէ՝ չար ծծմոր մնուցած երեխան չար է լինում առհասարակ. Բայց այս համոզմունքը մի կողմից և ճշմարիտ է. Զարութիւնը չէ կարող ի հարկէ ներս ծծուիլ կաթնի հետ, թէպէտ և պղպղված կնոջ կաթը աւրում է երեխայի ստամոքսը. բայց չար կինը չար է վարվում երեխայի հետ և իւր վարուղութեամբ և ոչ թէ կաթնով, չարաբարոյութիւն կամ վախկոտութիւն է ներշնչում նորան. Զը պէտք է մոռանալ, որ առաջին գաղափարը, որ կազմում է երեխան մարդկանց մասին և արտայայտում յեռոց խօսքով, միանգամայն կախված է այն բաներից, թէ ինչպիսի մարդոց պատկերներ կը տրպաւորվին առաջին անգամները նորա հոգւոյ մէջ, այդ պատկերները կը լինին և հիմք նորա ապագայ յարաբերութեանց համար դէպ ի մարդիկ. ուրեմն բաղդաւոր է այն երեխան, որոյ հոգւոյ մէջ տպաւորվեցաւ առաջին անգամից իւր մօր սիրալիր պատկերը.

Նորածին երեխայի հոգեկան զարգացման բոլոր ընդարձակ գործողութիւնից, մենք միմիայն հատուածներն ենք տեսնում որոշակի, որոնք մատնացոյց են լինում զարգացման մի ամբողջ ժամանակամիջոցին. ահա՛ երեխան այժմ կարողանում է աչքով հետևիլ շարժող առարկաներին. ահա՛ արդէն պարզում է նա և իւր թաթերը դէպ ի նոցա. ահա՛ և սկսեց ժպտիլ, ճանաչել մօրը, հօրը, դայեկին. Իսկ այս բոլորը այնպիսի բազմակողմանի եզրակացութիւններ, մտքութիւններ և գործողութիւններ են, որոց վերայ քիչ չէ աշխատել երեխան. և երբ նա կարողացաւ արդէն արտասանել առաջին բառը, այն ժամանակ երեխայի հոգին ներկայացնում է այնպէս մշակած և հարստացած երևոյթ, այնպիսի բազմաթիւ և բազմատեսակ դիտողութիւններ և փորձեր, միով բանիւ զարգացման այնպիսի բարձր աստիճան, որին չէ կարողանում հասնել մի անբանի կազմուածքը իւր հետևաբարոյական զարգացման բոլոր միջոցին սկզբից մինչև ի վերջը. Խօսքը իւրեանով հաստատում է և ամրապնդում տպաւորութիւններ և գաղափարները. սորանից յետոյ և շուտով սկսում է բացուիլ և զարգանալ յիշողութիւնը, որ կապակցելու է ժամանակաւ նորա զանազան կողմերը ի մի ամբողջութիւն. Այն ատեն անբան ժամանակամիջոցից արդիւնքները միայն կը մնան, հանդիսանալով իբրև անգիտակցական սովորութիւններ և հակումներ, որոնք ահագին ազդեցութիւն ունին մարդուս ընդունակութիւնների, բնաւորութեան և բոլոր կեանքի վերայ.

Զորս ամենայ մանուկի վերաբերութեամբ վերևը նկատած բոլոր պարագաներից անկասկած համոզուեցանք մենք, թէ արտաքին զգայարանքներն են այն միակ միջոցները, որոնցով երեխայի հոգին և միտքը հաղորդակցվում և կապակցվում է արտաքին աշխարհի հետ. Առանց զգայարանքների՝ մարդս

ամեն բանից միանգամայն զուրկ պէտք է մնար. վերցրէք, օրինակ՝ ականջները, և ահա՛ բոլոր բնութիւնը լուռ՝ անձայն՝ մեռածի պէս կ'լինի. հանեցէք աչքերը, և իսկոյն արեգակի և լուսնի լոյսը կը խաւարի և համայն աշխարհին մութ կը պատէ. զրկեցէք շօշափելեաց զգայարանքից, և յայնժամ մարդս ուրիշ բաներու հետ ունեցած հաղորդակցութիւնից այնպէս կը կտրուի կը զատուի, որ ամենայն արարածները 'ի չիք դարձած և ինքն մենակ մնացածի պէս կը լինի. Միով բանիւ արտաքին զգայարանաց միջնորդութեամբ, որ մարդս ստանում է բոլոր այն նիւթերը, որոնք կատարելագործուելով և մշակուելով դառնում են հիմք մարդկային մտքի և հոգւոյ բոլոր զարգացման և գործունէութեան.

Թէ ինչ նշանակութիւն ունին սովորութիւնները և ունակութիւնները այս գործարանների վերաբերութեամբ՝ մենք արդէն ցոյց տուինք վերևը ընդհանրապէս, իսկ այժմ մենք մտադիր ենք մի և նոյնը հաստատել աւելի նշմարելի և համոզիչ կերպիւ, այն է՝ ամեն մի զգայարանքին վերաբերեալ առանձին առանձին օրինակներով, որոնք ապացուցանում են թէ արտաքին զգայարանքներն էլ, ենթակայ լինելով սովորութիւններին և ունակութիւններին, կրթութեան և կատարելագործութեան ընդունակութիւն ունին. Արդէն նկատած և հաստատած է այն իրողութիւնը, որ եթէ մարդս զրկուած է լինում արտաքին զգայարաններից մէկից կամ մի քանիսից, ապա նա հարկադրուած է լինում յաճախ և յաճախ գործածել մնացածները, փոխարէն տալով սոցա բացի իւրեանց յատուկ պաշտօնը, այն պաշտօններն էլ, որ պէտք է վարէին անշուշտ միւս զգայարանները, եթէ միայն զուրկ չը լինէր մարդս նոցանից. Այսպիսի յաճախ և յաճախ գործածելուցն է ահա՛ հետևում, թէ զգայարանքներից մէկը պակաս մարդոց միւսները այնպիսի զարմանալի ունակութիւններ են ստանում, այնպէս ուժեղ, կենդանի և առոյգ հանդիսանում, որ մինչև անգամ սքանչելի ենք կարծում նոցա. կոյրերը շատ անգամ շօշափման կողմանէ զարմանալի ճշգութեան են հասնում. խուլ և համր եղողները, որ բոլոր իւրեանց գիտութիւնը աչքով են ստանում, իւրեանց հոգիներու բոլոր կարողութիւնը և ոյժը կարծես թէ աչքերու մէջն ունին ժողոված. աչք, ականջ, և լեզու շունեցողներու շօշափման և հոտառութեան կարողութիւնները չափից դուրս կը զօրանան, մանաւանդ հոտոտելիքը գրեթէ մէկ նոր զգայարանք է դառնում, և մինչև անգամ բարակի (բրոչ շուն) հոտառութեան սրութեանն է հասնում. Օրինակ, Ցակոբոս Միշէլինը խուլ, կոյր և անբառբառ տղայ էր և այս երեք դժբաղդութիւններին 'ի միասին ենթարկուած լինելով, հարկադրված էր հոտառութեան զգայարանքը բոլոր զօրութիւնովը գործածելու, սորանով և հասել է այնպիսի ունակութեան, որ՝ ինչպէս և Ստիւարտը վկայում է, եթէ մի օտարական գալու լինէր նորա մօտ, նա միշտ և անմիջապէս այդ իմանում էր հոտից և մինչև անգամ մատով ցոյց էր տալիս, թէ որ կողմն է օտարականը կանգնած. Թէ ինչ սքանչելի սրութեան կարող է հասնել հոտառութիւնը, գեղեցիկ օրինակ կարող է լինել նոյնպէս Ապէրքրոմպիի վկայածը "Իմացական կարողութիւններ" գրքի մէջ Մոյս փիլիսոփայի մասին. բաբեկամները մօտը եկած ժամանակ, նա կարողանում էր ճանաչել միմիայն հոտից, թէ նոցա հագուստը սև է թէ չէ.

Այն հանգամանքը, թէ ստէպ ստէպ և լաւ լաւ գինի խմողները ինչպիսի հեշտութեամբ և ճշգութեամբ են որոշում զանազան գինիներու համի տարբերութիւնը, ինքն իրան արդէն ցոյց է տալիս, թէ մարդուս ճաշակման զգացմունքները կրկնուելով կրկնուելով ոչ թէ միայն մէկ նրբութիւն և անսխալ ընտրութիւն են ստանում, այլ և շատ և շատ զօրանում են. Սորա վերաբերութեամբ ունակութեան կողմից ճաշակման վերայ արած ազդեցութիւնը այնպիսի նշանաւոր կերպով է յայտնուած, որ մարդուս հաւատալիքը կը գայ այն երկու մարդոց պատմութեանը, որ պատմում է Սերվանտէսը. Սոցա խնդրել են, որ տեսնեն թէ "շատ հին և լաւ է" ասուած մէկ տակառ գինիի համը ի՞նչպէս է. Մէկը համը տեսնելով, շատ լաւ գինի է, կ'ասէ, բայց միայն մի քիչ կաշիի համ ունի. Իսկ միւսը բերանն առած գինին բերանում սակաւ ինչ պտտեցնելուց և մտածելուց յետոյ, նոյն վճիռը կը տայ, աւելացնելով, թէ քիչ երկաթի համ է տալիս. Երբոր տակառը դատարկում են մէջը կաշիի կապով մէկ հին բանալի է գտնվում.

(Մ--ոորրը. յ-ջոոր Ռ---վ).